

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

ԹԵՄԱ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒՅՔԻ (EIRR) ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կրթության ոլորտներում տնտեսական եկամտաբերության ներքին դրույքն օգտագործվելու է որպես ելակետային հենասյուն այլ ներդրումային ծրագրերը գնահատելու համար, ինչպես նաև կրթության ոլորտում ներդրումների արդյունավետությունը գնահատելու համար:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է մշակել կրթության ոլորտում տնտեսական եկամտաբերության ներքին դրույքի գնահատման՝ Հայաստանում կիրառելի մեթոդաբանություն:

Ակնկալվող արդյունքը

Առաջադրանք 1. Միջազգային փորձի ուսումնասիրություն

Համադրելի երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է վեր հանել կրթության ոլորտում ներդրումների տնտեսական եկամտաբերության ներքին դրույքի գնահատման կիրառվող մեթոդաբանությունները:

Առաջադրանք 2. Կիրառելիությունը Հայաստանի համար

Միջազգային փորձի և տվյալների վերլուծության արդյունքներով անհրաժեշտ է առաջարկել Հայաստանում կրթության ոլորտում ներդրումների տնտեսական եկամտաբերության ներքին դրույքի հաշվարկման մեթոդաբանություն:

3. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ, ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության համար հատկացվող գումարը 1,5 մլն դրամ է, հետևապես՝ ներկայացվող բյուջեն պետք է համապատասխանի սահմանաչափին:

Դիմումատուն պատասխանատու է լինելու իր լոգիստիկ հարցերը կազմակերպելու համար, այդ թվում՝ հանդիպումների կազմակերպման, ճանապարհաձախսի և այլն:

Հետազոտության տևողությունը 6 ամիս է:

4. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ովքեր կարող են դիմել

MANOOGIAN SIMON RESEARCH FOUNDATION (MSRF)

- Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանող:
- Կարող են դիմել ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները:
- Ուսանողը դիմումի հետ պետք է ներկայացնի աջակցող նամակ իր բուհի ղեկավարության կողմից:

Հաղթողի ընտրությունը

Մրցույթի հաղթողն ընտրվում է մրցակցային գործընթացի միջոցով, որի ժամանակ դիմորդները գնահատվում են ըստ հետազոտության որակի, իրենց ներկայացրած հայտի մեթոդաբանության, հետազոտության համար պահանջվող գումարի, համապատասխան մասնագիտական փորձառության:

ՄՄՀՀ-ի աշխատանքները համակարգվում են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: